ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Սեյրան Զաքարյան

ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ)

Հիմնաբառեր. *Գրիգոր Տաթևացի, Ղազար Ջահկեցի, ազգ, ազգայնականություն, ազգայնական գաղափարախոսություն, միջնադարյան մտածելակերպ, հայոց ինքնության քրիստոնեական հարացույց, կրոնական խորհրդանշաններ:*

Ազգային ինքնության քրիստոնեական հարացույցի պահպանման, դրա բաղադրատարրերի նորացման ու հարստացման, ի մասնավորի ազգի մասին պատկերացումների մշակման գործում նշանակալից ավանդ են ունեցել Տաթևի համալսարանի ուսուցչապետ, նշանավոր աստվածաբան-իմաստասեր սուրբ Գրիգոր Տաթևացին[1] (1346-1409 թթ.) և հայոց կաթողիկոս, աստվածաբան, բանաստեղծ-երգագիր Ղազար Ա Ջահկեցին (հայոց կաթողիկոս՝ 1731-1751 թթ.)[2]: Հարկ է նշել, որ մեզանում Գրիգոր Տաթևացու և Ղազար Ջահկեցու գաղափարական առնչություններին առաջին անգամ անդրադարձել է Ա. Այվազյանը և եկել այն եզրահանգման, որ հայոց եկեղեցու երկու բարձրաստիճան հոգևորականներն էլ «ազգայնական» գործիչներ ու մտածողներ են, որ եթե Տաթևացին «հավատքն ու դավանանքն է համարում ազգի գլխավոր կազմարարները», ապա Ղազար Ջահկեցին՝ «հայրենիքը, ընդհանուր ծագումը, ազգային մշակույթն ու լեզուն», որը վկայում է Գրիգոր Տաթևացու համեմատ նրա առավել «**աշխարհիկ»** և **«քաղաքականացված ազգայնականության»** մասին[3]: Ստորև միջնադարյան աշխարհայեցողության յուրահատկությունների համատեքստում ներկայացվում են ազգի և ազգայինի ըմբռնման հարցում Գրիգոր Տաթևացու և Ղազար Ջահկեցու հայացքների միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները, այնուհետև ցույց է տրվում, որ ազգի ու ազգայինի ըմբռնման հարցում Ջահկեցին առաջադրում էր ոչ թե նոր (աշխարհիկ ու քաղաքականացված) մոտեցում, այլ հիմնականում պաշտպանում Տաթևացու կրոնական բնույթի գաղափարները:

Գրիգոր Տաթևացու և Ղազար Ջահկեցու կյանքին ու գործունեությանը քաջածանոթ մեկը կարող է տարակուսել, թե համեմատվելու ի՞նչ եզրեր կարող են ունենալ տարբեր դարերում ապրած ու գործած, տարբեր գործելաոճ ունեցող և իրարից վարք ու բարքով էապես տարբեր անձ-

---

** Հոդվածը ներկայացվել է 07.02.2020 թ., գրախոսվել՝ 08.04.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] Գրիգոր Տաթևացու կյանքի, գործունեության և փիլիսոփայական հայացքների մասին տե՛ս Аревшатян С., Философские взгляды Григора Татеваци. Е., 1957; Զաքարյան Ս., Հայ իմաստասերներ (Գրիգոր Տաթևացի), Ե., 1998:

[2] Ղազար Ջահկեցու կյանքի, գործունեության և գաղափարական հայացքների մասին տե՛ս Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, Մասն Ա, Պէյրութ, 1960, էջք 2916, 2976; Այվազյան Ա., Ղազար Ջահկեցու գաղափարախոսությունը, «Պատմաբանասիրական հանդես», 2002, № 1, էջ 138-154; Այվազյան Ա., Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Ե., 2003, էջ 108-146:

[3] Տե՛ս Այվազյան Ա., Ղազար Ջահկեցու գաղափարախոսությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 2002, № 1, էջ 138-154): Ի դեպ, Ա. Այվազյանը ազգայնականությունը նույնացնում է հայրենասիրության հետ: Անշուշտ, ազգայնականությունը և հայրենասիրությունը բավմիմաստ եզրույթներ են և ունեն ընդհանրության եզրեր, բայց դրանք տարբեր են թե՛ ստուգաբանմամբ և թե՛ բովանդակությամբ (ազգայնականությունը սեր է առ ազգը, հայրենասիրությունը սեր առ հայրենիքը և պետությունը, ազգայնականը կարող է լինել հայրենասեր, կարող է նաև չլինել, հայրենասերը կարող է լինել ազգայնական, կարող է նաև չլինել): Ազգայնականությունը և հայրենասիրությունը կարելի է տարբեր կերպ մեկնաբանել: Օրինակ, Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնը, ելույթ ունենալով 2018 թ. նոյեմբերի 11-ին Փարիզում Առաջին Համաշխարհային պատերազմի ավարտի հարյուրամյակին նվիրված հանդիսավոր արարողության ժամանակ, ասաց հետևյալը. «Հայրենասիրությունը ազգայնականության (նացիոնալիզմի) լրիվ հակադրությունն է, ազգայնականությունը դավաճանություն է հայրենասիրության նկատմամբ»:

նավորությունները: Իսկապես Տաթևացին ու Ջահկեցին հայ հոգևորականի երկու տարբեր տիպարներ են, որոնք թեև ունեն միևնույն դավանանքն ու հավատամքը, սակայն իրարից տարբերվում են ինչպես իրենց թողած աստվածաբանական-իմաստասիրական ժառանգության նշանակալիությամբ, հայոց եկեղեցու և հայ աստվածաբանական-իմաստասիրական մտքի պատմության մեջ իրենց զբաղեցրած տեղով ու դերով, այնպես էլ իրենց մարդկային հատկություններով ու գործելակերպով: Տաթևացին պատկառանք ներշնչող, իրեն հոգևոր կյանքին նվիրած անհատականություն էր՝ «կենդանի նահատակ», որը զարմացնում էր բոլորին, քանզի «կատարեալ էր իմաստութեան, եւ անչափ՝ գիտութեան մէջ»[1]: Ժամանակակիցները ակնածանքով ու հպարտությամբ են արտահայտվել նրա մասին, բարձր գնահատել նրա գործունեությունը, հիացել նրա վեհաշուք տեսքով, աստվածաբանական-իմաստասիրական գիտելիքներով, նպատակասլաց ու բազմաբեղուն գործունեությամբ, մտավոր ձեռքբերումներով, քրիստոնեական առաքինություններով, եկեղեցու հակառակորդների հետ բանավիճելու վարպետությամբ, ազգին մատուցած ծառայություններով և այլն: Տաթևացուն բարձր են գնահատել ոչ միայն ժամանակակիցները, այլև հետագա դարերի հայ մտածողները, այդ թվում Ղազար Ջահկեցին, ով Տաթևի համալսարանի ուսուցչապետի մասին գրել է. «Գրիգոր Տաթևացի. չորրորդ լուսաւորիչն հայոց. տիեզերանց անշիջանելի ճրագն. պայծառագոյն արուսեակն. ընտրութեան անօթն. սրբութեան տաղաւարն. հաւատոյ հաստատութիւնն. եկեղեցւոյ ամրութիւնն. մոլորելոց առաջնորդն. հասարակաց վարժապետն. ճշմարտութեան քանոնն. Հին և Նոր կտակարանաց դպիրն...», ով «Արար զգիրս բազումս երկնաշնորհ վարդապետութեամբ ի պէտս Հայաստանեայց եկեղեցւոյ. ի զարդ և ի պայծառութիւն աշակերտացս ճշմարտութեան»[2]: Իսկ իր «Երգարան»-ում նա հետևյալ կերպ է ձևակերպել Տաթևացուն նվիրված իր գովաբանական չափածո խոսքը. «Արեգական նըման ծագեալ ի Հայաստան, // Քաջ հռետուր եւ փիլիսոփայ անյաղթական, // Քան ըզՊղատոն եւ ըզՊորփիւր աստուածաբան, // Գեր ի վերոյ, քան զիմաստունս հելլենական»[3]:

Ի տարբերություն Գրիգոր Տաթևացու, Ղազար Ջահկեցին կյանքի թոհուբոհի մեջ ներքաշված, գործունյա, ճարպիկ, եկեղեցին իր և ազգակիցների շահերի համար ծառայեցնող, իշխանության հասնելու համար միջոցների միջև խտրականություն չդնող հոգևորական էր: Հայրենասեր էր[4], բայց անձնապաշտ, ազգասեր էր, բայց նյութապաշտ, աստվածաբան էր, բայց պերճախոս ու մեծամիտ հռետոր, շնորհալի վարդապետ էր, բանաստեղծ ու երգագիր, բայց առավելապես վերապատմող ու վերաշարադրող, կաթողիկոս էր, բայց աշխարհասեր ու քրիստոնեական առաքինություններին չհետևող, հոգևոր առաջնորդ էր, բայց միության ու համերաշխության փոխարեն սերմանում էր ատելություն ու անվստահություն, շահախնդիր ու օգտապաշտ էր, որի խոսքերն ու գործերը իրար չէին համընկնում[5], պայքարող գաղափարախոս էր, բայց կարող էր դիմել պայքարի անթույլատրելի միջոցների՝ վատաբանել, վարկաբեկել ու հալածել ժամանակի հայ եկեղեցու նշանավոր ներկայացուցիչներին[6]: Մ. Օրմանյանի բնութագրմամբ՝ «Ղազար թէպէտ ուսումնականի եւ աստուածաբանի համբաւ ունէր, բայց վարքով եւ բարքով նոյն հռչակը չէր վայելեր, եւ իբրեւ փառասէր եւ մեծամիտ ճանչուած էր, ու շքեղ եւ իշխանավայել կենցաղ կը վարէր, վասնզի հարուստ ալ էր»[7]: Մի այլ բնութագրությամբ Մ. Օրմանյանը դիպուկ է ներկայաց-

---

[1] *«Երանելի եռամեծ սուրբ Գրիգոր Տաթևացի անյաղթ փիլիսոփայի եւ հայոց մեծ տիեզերալոյս վարդապետի վարքը», «Գանձասար» հանդես, 1992, էջ 289:*

[2] *Ղապար Ջահկեցի, Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 640-641:*

[3] *Ղապար Ջահկեցի, Գիրք նորաբոյս որ կոչի Երգարան, Կ. Պոլիս, 1737, էջ 178:*

[4] *Ղապար Ջահկեցու հայրենասիրական գործունեության որոշ դրվագների մասին տե՛ս Կոստիկյան Ք., Հայոց եկեղեցու շահերի և հայապահպանության համար Ղապար Ջահկեցի կաթողիկոսի ձեռք բերած շահական հրովարտակների մասին, «Բանբեր Մատենադարանի», հ. 18, Ե., 2008, էջ 115-123:*

[5] *Այս կապակցությամբ թերևս ինքնաբնութագրական են իր աղոթքներից մեկում նարեկացիական ոճով արված խոստովանությունները. «Կերպարանիմ զԴաւթին՝ և գործք զՍաւուղայն կատարեմ: Շրթամբք ճշմարտեմ՝ և ստեմ երիկամամբք: Աչքովս մատակարարեմ՝ և ահեակ կողմամբս աւերեմ» (Ղապար Ջահկեցի, Գիրք աղօթից որ կոչի Աստուածաղերս, Կ. Պոլիս, 1744, էջ 116):*

[6] *Տե՛ս Դիլոյան Վ., Արմեն Այվազյան. Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երևան, «Լուսակն» հրատ., 2003, 343 էջ; «Պատմա-բանասիրական հանդես», 2004, № 1, էջ 300:*

[7] *Օրմանյան Մ., Ազգապատում, հ.2, Մասն Ա, Պէյրութ, 1960, էջ 2916:*

րել Ջահկեցու հակասական կերպարի լուսավոր ու ստվերոտ կողմերը. «Բոլոր կեանքին ընթացքին մէջ յայտնի կը տեսնուին անոր վրայ կարողութեան գովելի ձիրքեր, յաջողակութեան համար արթուն միտք, և ձեռնարկներու մէջ տոկուն ջանք սակայն դժբախտաբար ամենայն ինչ չափազանց էր անոր վրայ, և բուռն կիրքերով շաղախեալ էին անոր լաւ յատկութիւններն ալ: Արժանապատուութեան զգացումը մինչև սնափառութիւն մղուած, անձնապաշտպանութիւնը մինչև անգթութիւն հասած, ջանքը մինչև բռնութիւն, և համարձակութիւնը մինչև ապօրինութիւն յառաջացած»[1]:

Այնուհանդերձ, Գրիգոր Տաթևացու և Ղազար Ջահկեցու գործունեության ու տեսական հայացքների միջև համեմատություն անցկացնելու համար կան բավարար հիմքեր: Նախ, դրա համար կռվան է հենց Ջահկեցու «խոստովանագիրը», որում ինքն իրեն ըստ էության համարում է Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու հոգևոր աշակերտը, նրանց գաղափարների հետևորդն ու շարունակողը: Դրա մասին է վկայում թեկուզև նրա «Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի» երկի ութերորդ էջը, որում պատկերված են եկեղեցու գավիթում աթոռին նստած Հովհան Որոտնեցին, նրա կողքին կանգնած Գրիգոր Տաթևացին և նրանց առջև ծնկաչոքած ուսումնատենչ աշակերտաց խումբը: Այդ նկարի տակ գրված է. «Մեծըն Յօհան Որոտնեցին վարժապետ. // Սուրբըն Գրիգոր Տաթևացին աշակերտ. // Յորոց շառաւիղեաւ Ղազար վարդապետ. // Որ զայս գիրքս մ[ա]նկ[ա]նց Եկեղեցւոյ ետ»[2]:

Երկրորդ, Ղազար Ջահկեցին ոչ միայն հավուր պատշաճի հայտարարում, այլև իսկապես շարունակում է տաթևցիների գործը, քաջատեղյակ է նրանց աշխատություններին և իր գրքերում տարաբնույթ հարցեր քննարկելիս հենվում է նրանց աստվածաբանական-իմաստասիրական ժառանգության վրա, օգտագործում նրանց մտքերն ու ձևակերպումները և նյութի շարադրման ու ներկայացման սքոլաստիկական մեթոդները: Օրինակ, քննարկելով հոգու հարցը, Ջահկեցին շարադրում է դրա վերաբերյալ իմաստասերների ու հերձվածողների կարծիքները և գրում, որ «սուրբ Յօհան Որոտնեցի ամենաշնորհ վարդապետութեամբ զթիւր կարծիս նոցին եղծեալ ապականէ. և ապա զճշմարիտն արտադրէ ի մեկնութեան Սաղմոսին ի բանն որ ասէ «Ո՛ ստեղծ զսիրտ նոցա»»[3]: Ջահկեցու «Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի» երկը որոշ իմաստով նման է Տաթևացու «Գիրք հարցմանց»-ին. նախ, կազմված է հարցուպատասխաններից (աշակերտի հարցերին պատասխանում է վարդապետը), երկրորդ, ընդգրկում է կրոնաաստվածաբանական ու դավանաբանական հարցերի լայն շրջանակ, որոնց հիմնավորման կամ ցուցադրման ընթացքում առատորեն օգտագործվում են նախորդ դարերի հայ մտածողների աստվածաբանական-իմաստասիրական բնույթի նյութերը:

Երրորդ, Գրիգոր Տաթևացին և Ղազար Ջահկեցին հայոց եկեղեցու դավանաբանության պաշտպաններից էին, իրենց ժամանակի հակամիարարական շարժման առաջնորդներ: XIII-XV դդ. և XVII-XVIII դդ. հայոց եկեղեցու գաղափարաբանները պայքարում էին երկու ճակատով՝ ընդդեմ հայության իսլամացման փորձերի և ընդդեմ Հռոմի կաթոլիկ եկեղեցու միարարական նկրտումների: Թե՛ Տաթևացին և թե՛ Ջահկեցին, լինելով հակամիարարական շարժման առաջնորդներ, իրենց առաջնահերթ խնդիրն էին համարում Հայաստանեայց առաքելական եկեղեցու կարգավիճակի, դավանաբանության ու ծիսակարգի, ավանդույթների ու հոգևոր ժառանգության պաշտպանությունը, ուստի, անկախ կիրառած միջոցներից, գործում էին «ի փառս սրբոյն Էջմիածնի» նշանաբանով: Կասկած չկա, որ իբրև հայոց եկեղեցու գաղափարախոսներ, նրանց գաղափարական հայացքներում պետք է լինեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ ժամանակային հանգամանքներով պայմանավորված տարբերություններ: Տվյալ դեպքում խնդիրը վերաբերում է այդ տարբերությունների բնույթին. կամ դրանք բավարար են պնդելու, որ Տաթևացու համեմատ Ջահկեցին առաջադրել է «**աշխարհիկ»** և **«քաղաքականացված ազգայնականության»** գաղափարախոսական ուսմունք, ի մասնավորի՝ ազգի բնութագրման հարցում առաջնային տեղ տալով ոչ թե հավատքին ու դավանանքին, այլ աշխարհիկ տարրերին՝ ազգին, հայրենիքին ու մշակույթին, կամ էլ՝ եզրակացնելու, որ այդ տարբերությունները չունեն սկզբունքային

[1] *Նույն տեղում, էջ 2976:*

[2] *Ղազար Ջահկեցի, Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, էջ 8:*

[3] *Նույն տեղում, էջ 29:*

բնույթ, որ Ջահկեցին փոխառել, կրկնել, վերաշարադրել ու ճոխացրած ներկայացրել է Տաթևացու բազմաթիվ, այդ թվում ազգին ու ազգային ինքնությանը վերաբերող ձևակերպումները:

Միջնադարյան աստվածակենտրոն ու փրկաբանական (վախճանաբանական) աշխարհայեցողությունը առհասարակ ուներ համընդհանուր, համամարդկային (վերազգային) բովանդակություն, որում տեսականորեն ըստ էության տեղ չկար որևէ «ազգայնականության» համար: Աստծու համար չկան ընտրյալ ազգեր, բոլորն էլ հավասար են նրա առջև, և Աստծո Որդին զոհաբերվում է ոչ թե մեկ ազգի, այլ հանուր մարդկության փրկության համար: Համեմատության կարգով նշեմ, որ երբ «տիեզերական վարդապետ» Գրիգոր Նարեկացին իր «բանավոր անարյուն զոհաբերությամբ» առաջադրում է մարդկանց փրկության նոր տեսլական, ապա աստվածաշունչ ու ավետաբեր իր «Մատեան ողբերգութեան» գիրքը հանձնարարում է ոչ թե առանձին ազգի կամ հավատացյալների ինչ-որ խմբի, այլ ամբողջ մարդկությանը՝ բանական բոլոր էակներին ու «համայնատարած քրիստոնյաների տիեզերագումար ամբողջ բազմությանը»: Ըստ քրիստոնեական աշխարհայեցողության՝ մարդկային պատմությունը շարժվում է աստվածային նախախնամությամբ պայմանավորված նախագծով, Աստծո կամքը մարմնավորված է մարդկային պատմությունը առաջշարժող ուժերի մեջ, և այդ համատեքստում յուրաքանչյուր ազգի առաքելությունն է հետևել աստվածային կամքին՝ մտածելով փրկության ու Ահեղ Դատաստանի մասին: Քրիստոնյա մտածողի համար աշխարհը ժամանակավոր հանգրվան է, հետևաբար աշխարհիկ ամեն ինչ, այդ թվում ազգը, հայրենիքն ու պետությունը, անցողիկ են ու ժամանակավոր և լավագույն դեպքում դրանք արժևորվում են այնքանով, որքանով նպաստում են փրկությանը և ուղղված են երկնային կյանքի նախապատրաստմանը: Այս իմաստով թեև քրիստոնյա մտածողը տեսականորեն չի կարող լինել «ազգայնական», որովհետև «ազգայնականությունը» առ ոչինչ է դարձնում աստվածային նախախնամությունը, սակայն միաժամանակ գործնականում չի կարող չմտածել այն ազգի, հասարակության և պետության հոգսերի ու ճակատագրի մասին, որում ինքն ապրում ու գործում է: Այսինքն՝ մարդկության պատմության ու գոյատևման վերաբերյալ քրիստոնեական մոտեցումը բնավ չի խանգարել (որոշ դեպքերում նույնիսկ նպաստել է), որ կյանքի տարբեր երևույթների իմաստավորման ու մեկնաբանության ընթացքում միջնադարյան քրիստոնյա մտածողները ցուցաբերեն լայն իմաստով ազգային մոտեցում՝ արտահայտեն ազգասիրական ու հայրենասիրական բնույթի մտքեր: Օրինակ, ըստ Ռ. Քոլինգվուդի՝ միջնադարյան պատմագրի «ազգայնականության» յուրահատկությունն այն էր, որ պատմիչը՝ վարակված ազգային հակակրանքով կամ ազգային գերազանցության գիտակցումով, գիտեր, որ սխալ է վարվում: Նրա խնդիրը ոչ թե որևէ երկրի, օրինակ, Անգլիայի կամ Ֆրանսիայի փառաբանումն էր, այլ Աստծո գործերի (gesta Dei) լուսաբանումը[1]: Միջնադարում այդ «ազգասիրությունը» դրսևորվում էր տարբեր ձևերով՝ եկեղեցու, դավանանքի, կրոնական խորհրդանշանների, ազգի, հայրենիքի, մշակույթի, լեզվի, կրոնական ավանդույթների, պատմական միֆերի և այլ արժեքների մեծարումից մինչև աստվածընտրյալ ազգի, գերագույն իշխանության, համայն քրիստոնեական աշխարհի փրկիչ ազգի հռչակումը: Օրինակ, միջնադարյան հայ աստվածաբանական-իմաստասիրական ու պատմաքաղաքական երկերում «ազգասիրությունն» ու «հայրենասիրությունը» դրսևորվել են նախ հայոց եկեղեցու, նրա սրբերի, մասունքների ու խորհրդանշանների, այնուհետև թռուցիկ՝ հայկական թագավորությունների, ազգի պատմության հերոսական դրվագների, պատմական անձնավորությունների մեծագործությունների փառաբանությամբ, նրանց առաքինություններով՝ հայրենասիրությամբ, կրթասիրությամբ, բարեպաշտությամբ, մարդասիրությամբ ու գթասրտությամբ հպարտանալու ձևերում, նրանց հասցեագրված բարեմաղթանքներում: Նույնիսկ կարող ենք պնդել, որ միջնադարյան հայ մատենագիտության մեջ ազգը ամբողջացնող հիմքերը՝ Հայոց աշխարհը, երկիրը, հավատքը, եկեղեցին, հավատացյալ ժողովուրդը, լեզուն, գիրը, հոգևորականությունը և այլն, ի սկզբանե ներկայացվում էր որպես մի անտրոհելի ամբողջություն, որը չի կարելի անվանել «ազգայնական գաղափարախոսության» դրսևորում, որովհետև նախ, այդ ամբողջության առանցքում կրոնն է, հավատքը, եկեղեցին, երկրորդ՝ ինքնության մնացյալ տարրերը,

[1] Տե՛ս Коллингвуд Р., Идея истории. Автобиография. Перевод и комментарий Ю. А. Асеева, М., 1980, с. 52.

որոնք կատարում են որոշակի գործառույթ, լրացնում ու ամբողջացնում են այդ «գաղափարախոսության» կառույցը: Միջնադարյան հայ մտածողների, այդ թվում թե՛ Տաթևացու և թե՛ Ջահկեցու ազգասիրությունը, ինքնապաշտպանական (մաքառման) մշակույթի բնական դրսևորում է, այսինքն՝ այն չի հետապնդում ո՛չ քաղաքական (քաղաքական բնույթի գաղափարախոսությունները առաջանում են այն ժամանակ, երբ ձևավորվում են քաղաքական շարժումներ, երբ ազգը կրոնական համայնքից ձգտում է վերածվել քաղաքական ազգի), ո՛չ սոցիալ-տնտեսական համատեղ գործունեության, ո՛չ ազգակերտման սովորական, էլ չենք ասում «հարձակվողական» նպատակներ, ո՛չ ուրվագծում է տեսլականներ, ո՛չ էլ մշակում դրանց հասնելու ռազմավարական ու մարտավարական ուղիներ, այլ առավելապես կոչված է պահպանելու ազգի համար տարբերակիչ նշանակություն ունեցող կրոնամշակութային արժեքները, հոգևոր ժառանգությունը, պատմաեկեղեցական միֆերը, ավանդույթներն ու ծեսերը, քարոզելու ազգային միասնություն ու համերաշխություն, նվիրվածություն եկեղեցուն ու հավատքին (դավանանքին), ձևավորելու ազգային հպարտության ու արժանապատվության գիտակցում: Դրանք կրոնական բնույթի մաղթանքներում, ողբերում, տեսիլքներում, ավանդազրույցներում դրսևորվում են առավելապես ցանկությունների ու դրական վերագրումների, քան գաղափարախոսություններին ներհատուկ ծրագրային դրույթների տեսքով: Այլ խոսքով, միջնադարում կրոնական-մշակութային «ազգասիրության» տարրերը տեղավորվում են ազգային ինքնության կրոնական հարացույցի շրջանակներում, որի կենտրոնում գտնվում են ոչ թե ազգն ու հայրենիքը, այլ Ս. Գիրքը, եկեղեցին, կրոնական համայնքը՝ իր դավանանքով, ավանդույթներով, խորհրդանշաններով, ծեսերով ու արարողություններով:

Քանի որ միջնադարում ազգայինը նույնացվում է կրոնականի հետ և ազգայինը դրսևորվում էր կրոնականի տեսքով, իսկ քրիստոնյա մտածողները (աստվածաբանը, պատմիչը) փորձում էին «Աստծո գործերի» լուսաբանման շրջանակներում ներառել սեփական ազգի պատմությունը՝ սկսած ծննդաբանությունից ու դարձից մինչև Ահեղ դատաստանին սպասող ներկան, ուստի նրանք ազգի որոշարկման ու համախմբման առաջնային հիմքը համարում են ոչ թե տարածքը, լեզուն և արյունակցական-ազգակցական կապերը, այլ հավատքն ու եկեղեցական ավանդույթը, այսինքն՝ դավանաբանությունը, ծեսերն ու արարողությունները: Այս մտայնության համատեքստում Գրիգոր Տաթևացին ձևակերպում է «կրոնական ազգի» սահմանումը, ըստ որի՝ ազգերն իրարից տարբերվում են տարածքով, աշխարհագրական տարածքով, լեզվով, սակայն առավելապես՝ կանոնական սահմանադրությամբ, այսինքն՝ հավատքով, եկեղեցու դավանաբանությամբ, ծեսերով ու ավանդույթներով. «Ազգ առ ազգ բաժանեալ լինի գաւառաւ և լեզուաւ և կանոնական սահմանաւ որ են աւանդութիւնք և հաւատք եկեղեցւոյ: Եւ բաժանումն յաւետ զքան գաւառաւ և լեզուաւ՝ կանոնական սահմանաւն ասացեալ լինին. այսպէս և առ միաբանութիւնս է իմանալ. առաւել միաբանութիւն ասել զորս կանոնական սահմանադրութեամբ է, քան որ գաւառաւ և լեզուաւ»[1]: Կանոնական սահմանադրությամբ քրիստոնյա ազգերը ոչ միայն տարբերվում են իրարից, այլև միաբանվում, և այդպիսի հիմքի վրա խարսխված միաբանությունը գերադասելի է մյուսներից: Այս համատեքստում ինքնության հարացույցի կառուցարկման գործում առաջնային նշանակություն են ձեռք բերում տվյալ ազգի կրոնական խորհրդանշանները՝ Դարձի, եկեղեցու՝ հիմնադրմանը ու հիմնադիրներին, սրբերին, նահատակներին, եկեղեցում պահվող նշխարներին ու մասունքներին առնչվող պատմությունները: Եթե տվյալ ազգի մասին տվյալներ կան Աստվածաշնչում, կամ այդ ազգը առնչություններ ունի Քրիստոսի և նրա աշակերտների՝ առաքյալների, կենսագրության հետ, կամ կան տվյալ ազգի և Աստծո հետ կապված ինչ-որ երևակայական նշաններ ու զրույցներ, ապա այդ ազգի ինքնության կերտողները միանշանակ այդ փաստերը օգտագործում են հպարտանալու իրենց ազգի բացառիկությամբ և իրենց ազգային ինքնության օրինականությամբ: Այդպիսի «կռվանների» անհրաժեշտությունը հատկապես զգացվում է դավանաբանական պայքարի ժամանակ, երբ գաղափարական բանավեճերի ընթացքում մի կողմը մյուսին ներկայացնում է տարբեր կարգի «մեղադրանքներ»՝ ձգտելով ցույց տալ իր եկեղեցու պատմության, դրա դավանաբանության ու ծիսակարգի առավելությունները և

[1] *Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 552:*

մյուսների նկատմամբ իր գերակայության իրավունքը: Ահա այդպիսի դավանաբանական (միարարական շարժման դեմ) պայքարի ժամանակ, Տաթևացին, պատասխանելով հայոց ազգին ուղղված մեղադրանքները, անցնում է «հակահարձակման» և մատնացույց անում փաստեր, որոնք ցուցանում են հայոց եկեղեցու և դրա դավանաբանության առավելությունը քրիստոնյա մյուս ազգերի եկեղեցիների նկատմամբ: Ի թիվս այլ կռվանների, Տաթևացին ցույց է տալիս, որ Աստված ոչ միայն չի անտեսել, այլև հայոց ազգին շնորհել է բազմաթիվ «բարութիւններ», որոնցից են՝ ա) հրաշքով Դարձը, բ) եկեղեցու շինության ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը, գ) Քրիստոսի տասներկու առաքյալներից երեքը քարոզել ու վախճանվել են հայոց աշխարհում, դ) «Աբգարու թագաւորին նախընծայ ի Քրիստոս հաւատալն», ե) աստվածապարգև գիրը, զ) Արարատի վրա Նոյի տապանի կանգնելը, է) եդեմաբուխ երեք գետերի գտնվելը Հայքում, ը) Արևելյան կողմի կոչվելը Հայք, թ) աստվածատունկ դրախտը Հայքում գտնվելը, ժ) Լուսատուների շարժի սկսվելը Հայքի կողմից, որ խորհրդանշում է Քրիստոսի երկրորդ գալուստի ուղին («այսմ կողմանէ շարժին լուսաւորքդ ի յընթացս իւրեանց. որ են կարապետ մեծին լուսոյ ծագմանն: Վասն զի արեգակն արդարութեան Քրիստոս հայրական փառօք և աստուածագումար դասուք և կարապետեալ աստուածային նշանն անտի գալոց է ըստ տեառն...»)[1]: Տաթևացու թվարկած առանձնաշնորհները («բարութիւնները») ցուցանում են հայոց ինքնության քրիստոնեական հարացույցի նույնականության հիմքերի ամրությունը, հիմքեր, որոնք սրբագործում են ինքնության հարացույցը և բավարար են քրիստոնեական համաշխարհում ունենալու արժանապատիվ կարգավիճակ: Ավելորդ չէ նշել, որ երբ Տաթևացին խոսում է ազգերի կանոնական-դավանաբանական բաժանման մասին, ապա դա անում է՝ հիմքում ունենալով ազգերի բաժանման իրողությունը և գործածում է «ազգս հայոց», «լատինացիք», «յոյնք» և այլն, որոնք իրարից տարբերվում են շատ բաներով, բայց գլխավորապես՝ «կանոնական սահմանաւ»: Հենց դա էլ ազգերի բնորոշման չափանիշ համարելով՝ Տաթևացին կարծում է, որ «ազգս հայոց» առավելություն ունի մյուս քրիստոնեական ազգերի նկատմամբ, որովհետև «ունի առաւել ճշմարիտն և զառաւել բարին ի դաւանութիւնն և ի կարգս, այսինքն ի հաւատս և ի գործս: Ապա ուրեմն պարտին ամենայն ազգք քրիստոնէից սորա հետևիլ»[2]: Անշուշտ, դա բնավ չի նշանակում, թե Տաթևացին թերագնահատում է ինքնության մյուս բաղադրիչների դերը: Ազգերի սահմանազատման գործում էական նշանակություն ունի նաև լեզուն, որը ազգերին ի վերուստ տրված պարգև է. «Եւ սահման կոչէ զլեզուս որ բաժանէ ի միմեանց զազգս և զազինս, որպէս որք պարսպով և նշանիւ սահման դնեն և զանդս բաժանեն: Եւ դարձեալ՝ որպէս սահմանն զտեսակս ազգացն նշանակէ, նոյնպէս և լեզուն զիւրաքանչիւր ազգս ցուցանէ: Եւ դարձեալ՝ զի անփոփոխելի է սահմանն, որպէս սահման մարդոյն և ձիոյն և այլոցն: Նմանապէս և զայս սահման լեզուի ո՛չ ոք կարէ փոփոխել. ո՛չ բռնաւոր և ո՛չ իշխան, բայց միայն Աստուած որ եդ զսա»[3]: Նշելով, որ լեզուների միջև գոյություն ունեն որակական տարբերություններ, օրինակ, հունարենը՝ փափուկ է, հռոմեականը՝ սաստիկ, ասորականը՝ աղաչական, պարսկականը՝ պերճական և այլն, նա կրկնում է միջնադարյան հայ մատենագրության մեջ տարածված այն տեսակետը, ըստ որի հայերենը առավել է բոլորից, որովհետև իր բնույթով «համեղական» է ու համադրական, որովհետև «կարող է զամեն լեզուս յինքն ամփոփել և բոլոր խօսիլ, և այլքն ոչ...»[4]:

Այն պնդումը, թե Ջահկեցին «զարգացնում» է Տաթևացու հայացքները՝ ինքնության կառուցվածքում և ազգի բնութագրման մեջ առաջնային տեղ տալով աշխարհիկ տարրերին՝ ազգին, հայրենիքին, մշակույթին, այնուհետև հավատքին ու դավանանքին, չի համապատասխանում իրականությանը: Նման եզրակացության համար հիմք է հանդիսացել Ջահկեցու հետևյալ միտքը. «Ազգ յաբեթեան և թորգոմեան նաև աբրահամեան, վաղահաս պտուղք բարդուղիմէոսեան և թադէոսեան, լուսածնունդ զաւակք սուրբ Էջմիածնեայ և Գրիգորեայն առանց ամենայն տարակուսանաց և հակառակութեանց՝ հայք են և ասին: Ազգք տոհմիւ օրինեալ. երկրաւ բարեբանեալ. լեզուաւ կանխազարդեալ. գրով բարգաւաճեալ. հավատով ազնուացեալ. անուամբ ճո-

[1] Նույն տեղում, էջ 555:
[2] Նույն տեղում, էջ 550:
[3] Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 298:
[4] Նույն տեղում, էջ 299:

խացեալ, առաքինութեամբ բարեպաշտեալ. ի տէր պարծեցեալ. և զնմանէ գոհացեալ. և յաստուածաշունչ գրոց քարոզեալ»[1]: Գնահատելով ազգը գովաբանող Ջահկեցու այս թվարկումները, Ա. Այվազյանը հիմնականում տալիս է բնագրին չհամապատասխանող արդիական մեկնություններ: Այսպես, Ջահկեցու «**ազգք տոհմիւ օրինեալ**» բնորոշումը ըստ նրա նշանակում է՝ «հայերի ծագումն ընդհանուր նախահայրից», «**երկրաւ բարեբանեալ**»-ը՝ «Հայաստանում և նրանից դուրս ապրող հայերի խոր կապվածությունը հայ ազգի ձևավորման ու բնակության բնիկ տարածքին, որ կարելի է կոչել նաև «Հայրենիքի սինդրոմ», «**Լեզուաւ կանխազարդեալ**»-ը՝ «հայոց լեզուն որպես հայերի ընդհանուր լեզու լինելը», «**Գրով բարգավաճեալ»-ը՝ «**ազգային գրական-մշակութային վիթխարի ժառանգության առկայությունը», «**Հաւատով ազնուացեալ**»-ը՝ «ազգային եկեղեցին և նրա ուրույն գաղափարախոսությունը՝ հայադավանությունը», «**անուամբ ճոխացեալ, առաքինութեամբ բարեպաշտեալ. ի տէր պարծեցեալ. և զնմանէ գոհացեալ. և յաստուածաշունչ գրոց քարոզեալ**»-ը՝ «ազգային արժեքների և նվաճումների ճանաչումն ու մեծարումը»: Մինչդեռ ազգը բնութագրող վերոբերյալ թվարկումներով Ջահկեցին ոչ թե սահմանում է ազգի կազմարար հատկությունները, այլ պարզապես հպարտանում է հայ ազգի տոհմիկությամբ (հայ ազգը ունի ազնվատոհմիկ ծագում, սերում է աստվածաշնչյան նախահայրերից), բարեբանյալ երկրով (հայերն ունեն օրհնված, փառաբանված երկիր), կանխազարդյալ լեզվով և բարգավաճած գրով (հայերն ունեն գեղեցիկ լեզու, ծաղկուն գիր ու գրականություն), «անուամբ ճոխացեալ, առաքինութեամբ բարեպաշտեալ. ի տէր պարծեցեալ. և զնմանէ գոհացեալ. և յաստուածաշունչ գրոց քարոզեալ»-ով (հայերն ունեն ճշմարիտ հավատք, հայտնի են իրենց անվամբ, առաքինությամբ, բարեպաշտությամբ, Ս. Գրքերի քարոզմամբ, Աստծո կողմից գնահատվածությամբ): Միայն Ջահկեցու վերոբերյալ մտքի սկիզբը՝ «Ազգ յաբեթեան և թորգոմեան նաև աբրահամեան, վաղահաս պտուղք բարդուղիմէոսեան և թադէոսեան, լուսածնունդ զաւակք սուրբ Էջմիածնեայ և Գրիգորեայն առանց ամենայն տարակուսանաց և հակառակութեանց՝ հայք են և ասին», ազգի կրոնական ըմբռնման ակնհայտ արտահայտություն է: Ջահկեցու բնորոշումներում (որոնք չպետք է շփոթել ազգի կազմարար հատկությունների հետ) չկա «աշխարհիկ գաղափարախոսության» նշույլ. ինչպես ինքնության մյուս հարացույցների, այնպես էլ կրոնական ինքնության կառուցվածքի մեջ պարտադիր մտնում են ազգի ծննդաբանության մասին պատկերացումները, տարածքը, լեզուն, մշակութային արժեքները, խորհրդանշանները, գիրը (քրիստոնեական մշակույթը գրակենտրոն և գրքակենտրոն է), եկեղեցին՝ իր հիմնադիրներով, սրբերով, նահատակներով, դավանաբանական սկզբունքներով և գործելու կանոնակարգով: Իսկ եթե նկատելի են աշխարհիկ տարրեր, ապա դրանք, ինչպես վերը նշվեց, առհասարակ խորթ չեն միջնադարյան կրոնական մտածողությանը, պարզապես դրանք չեն եղել ինքնաբավ, այլ իրենց ստորադաս գործառույթներով հարստացրել են այդ մտածողության կառույցը: Եթե նույնիսկ ընդունենք, որ Ջահկեցին «ազգակազմիչ տարրերը» թվարկելիս առաջնային է համարում «հայրենիքը, ընդհանուր ծագումը, ազգային մշակույթն ու լեզուն» (ի դեպ, ի բաց առյալ լեզվի, Ջահկեցին իր գրքում չի գործածում մնացյալ եզրույթները), ապա նա դա ո՛չ հիմնավորում է, ո՛չ էլ վերածում գաղափարական ելակետային մտադրույթի: Եթե քերականություն չիմացողը պատահաբար ճիշտ է գրում մի նախադասություն, ապա դա դեռ հիմք չէ պնդելու, որ նա գիտի քերականություն: Հետաքրքիր է նշել, որ մինչև իր ընտրած «ազգակազմիչ» հատկությունները թվարկելը, Ջահկեցին գրեթե երկու էջ հատկացնում է ազգային ինքնության նույնականությունը ցուցանող կրոնական խորհրդանշանների ներկայացմանը: Ընդսմին, նա պատասխանում է աշակերտի այն հարցին (որը վերցրված է Տաթևացու «Գիրք հարցմանց»-ից), թե Աստված ի՞նչ «բարութիւններ» է պարգևել հայոց ազգին: Գրեթե բառացիորեն կրկնելով Տաթևացու թվարկած բոլոր «բարութիւնները», այնուհետև հայոց կաթողիկոսը դրանց թիվը ավելացնում է ոչ թե **աշխարհիկ**, այլ ազգային ինքնությունը նույնականացնող **կրոնական** բնույթի բազմաթիվ փաստերով և խորհրդանշաններով (մատուռներ, սուրբ նշաններ, տեսիլքներ, մասունքներ, նշխարներ, կենդանագիր պատկերներ և այլն)[2]:

---

[1] *Ղազար Ջահկեցի, Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, էջ 677:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 670-677:*

Ավելորդ չէ նշել, որ ազգը, հայրենիքը, պետությունը և պետական-քաղաքացիական այլ հաստատություններ առաջնային են դառնում ինքնության մոդեռն կամ լուսավորական (աշխարհիկ, ազգայնական) նախագծերում: Եվ եթե ենթադրենք, որ Ջահկեցին իսկապես այդպես է պատկերում հայոց ինքնության կառուցվածքը, ուրեմն նրան դրա հիմքի վրա պետք է համարենք լուսավորական դարաշրջանի աշխարհիկ մտածող: Մինչդեռ թե՛ Տաթևացին և թե՛ Ջահկեցին միջնադարյան քրիստոնյա մտածողներ են, աստվածաբան-վարդապետներ, որոնց տեսական հայացքները դուրս չեն գալիս կրոնական աշխարհայեցողության ու եկեղեցական վարդապետության շրջանակներից: Եվ հենց այդ հայացքների համապատասխան էլ նրանք ստեղծում են հայոց կրոնական ինքնության իրենց պատկերը, որի կենտրոնում կրոնն է, հավատքը, եկեղեցին, դավանանքը, քրիստոնեական ու եկեղեցական խորհրդանշանները, արարողակարգն ու ավանդույթները, այնուհետև ազգը, հայրենիքը, աշխարհիկ արժեքները և այլն: Եթե XVII-XVIII դդ. կրոնական ինքնության հարացույցում հանդիպում են աշխարհիկ տարրերի, ապա ճիշտ կլիներ դրանք նախ ներկայացնել որպես միջնադարյան հայոց մտածողությանը բնորոշ երևույթ, երկրորդ, որպես տվյալ ժամանակաշրջանի մտածողության մեջ երկվության դրսևորում, որպես կրոնական ինքնության սահմանների ընդլայնման միտում:

Ազգի բնութագրման հարցում Տաթևացու և Ջահկեցու ըմբռնումները գնահատելիս չպետք է անտեսել այն փաստը, որ նրանց թողած գրավոր ժառանգությունը առավելապես կրոնաաստվածաբանական է, որում ազգի, հայրենիքի, հայոց ինքնության ու աշխարհիկ արժեքների մասին կարող ենք գտնել մատների վրա հաշվելի էջեր: Օրինակ, Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի տպագիր տարբերակն ունի 800-ից ավել էջ, որոնցից ընդամենը մի քանի էջում են քննարկվում հայոց ազգին առնչվող հարցեր: Նմանապես, Ջահկեցու «հայ պաշտոնական ազգայնականության ձեռնարկ» հորջորջված «Երգարան»-ում թեև ավելի մեծ տեղ է հատկացված «հայկական թեմատիկային», սակայն դրա մեծագույն մասը նվիրված է հայոց եկեղեցու հայրապետներին, նշանավոր գործիչներին, սրբերին, հավատի համար նահատակված զորավարներին, Էջմիածնի եկեղեցուն և այլն: Օրինակ, Վարդանանց նվիրված երգում («Երգ սրբոց Վարդանանց») Ջահկեցին չի էլ ակնարկում, որ Ավարայրի դաշտում նրանք նահատակվեցին նաև «վասն հայրենեաց»: Այդ երգն սկսվում է հետևյալ տողերով. «Սուրբըն Վարդան պէտըն հայոց. // Զորաց գնդից գումարելոց. // Քաջալերէր զինուորս իւրոց. // Մատնիլ ի մահ վասն հաւատոց» և ավարտվում է հետևյալ տողերով. «Որպէս զոչխար ի սպանդ վարեալք. // Վասն Աստուծոյ զարիւնս հեղեալք. // Անուշահոտ պատարագեալք. // ԶԱստուած ընդ մեզ հաշտեցուցեալք»[1]: Ավելորդ չեմ համարում բերելու Ջահկեցու ոչ աշխարհիկ մտածողության ևս մի օրինակ. երբ կաթոլիկ գրագետները հայերին մեղադրում էին այն բանում, որ «ոչ ունելով թագաւոր, ստրուկ և փոքր գոլով ոչ հնազադիք իշխանութեանս մերում հռոմեական», փոխանակ պատասխանելու, որ հայերն էլ ժամանակին ունեցել են հզոր թագավորություններ, որոնք ինչ-ինչ պատճառներով վերացել են, բայց չեն կորցրել հայոց պետականությունը վերականգնելու հույսը (ինչպես կերազեր ամեն մի «աշխարհիկ ազգայնական»), Ջահկեցին պատասխանում է, թե հայոց փոքրությունը հուսահատության պատճառ չէ, որովհետև «բազումք են կոչեցեալ, և սակաւք են ընտրեցեալք» և ամենակարևորը՝ «Քանզի Տէրն բնաւից՝ փոքերց խոստացաւ զարքայութիւնն»[2]: Ինչպես նկատելի է, այս և նմանաբնույթ այլ երգերում ու մտորումներում չկան «աշխարհիկ ազգայնական գաղափարախոսության» տարրեր, իսկ եթե անգամ տեսանելի են ինչ-որ տարրեր, ապա ոչ թե աշխարհիկ, այլ միանշանակ՝ կրոնական բնույթի:

Ջահկեցին ոչ միայն ազգի բնութագրման, այլև առհասարակ Տաթևացու համեմատ չի առաջադրում նոր մտքեր ու գաղափարներ, ընդամենը փոխառում և վերաշարադրում է Տաթևացու ձևակերպումները: Այսպես, Ա. Այվազյանը Ջահկեցու գրքից բերում է մի միտք և փորձում ճշտել դրա աղբյուրը. «Եւ զայս վասն է՞ր է յերկարել ինձ, զի ցուցանիցի թէ ո՛չ է պարտ միոյն ճշմարտի բազում ստոց հետևիլ: Եւ լաւ է մի գոյացութիւն, քան զբազումս պատահումն: Եւ մի արեգակն, քան զբազում աստեղս: Եւ մի գլուխ, քան զբազում անդամս: Մի ակն պատուական,

[1] *Ղապար Ջահկեցի, Գիրք նորաբոյս որ կոչի Երգարան, էջ 208-210:*
[2] *Նույն տեղում, էջ 668:*

քան զբազում քարինս անպիտան»: Այս վերջին տողն իր հիմքում,– գրում նա,– ունի համընդհանուր տարածում գտած հայ ժողովրդական մի հատու բանաձևում, որ հանդիպում է XVII դարի բանաստեղծ Դավիթ Սալաձորցու խաղերից մեկի մեջ. «Որպէս ակն ու գոհար, մարգարիտ մանր է. // Նոյնպէս հայն փոքր ազգ է եւ գինն ծանր է»[1]: Դժվար է ասել թե ինչ ընդհանրություն կա համեմատվող տեքստերի միջև, բայց տվյալ դեպքում կարևորը դա չէ: Ջահկեցին այդ միտքը (և ոչ միայն, այլ այս դեպքում իր «Դրախտ ցանկալի» գրքի ամբողջ 669 էջը) բառացիորեն փոխառել է Տաթևացու գրքից: Մեջբերենք Տաթևացու միտքը. «Դարձեալ՝ յայտնապէս ասել ո՛չ է հարկ՝ թէ ամենայն բազում պատուական է քան զմին. զի ահա գոյացութիւն մի է և պատահումն բազում. արեգակն մի է և աստեղք բազում. և գլուխն մի է և անդամք բազում:.. Եւ զայս վասն է՞ր է յերկարել ինձ, զի ցուցանիցի թէ ո՛չ է պարտ միոյն ճշմարտի բազում ստոց հետևիլ: Եւ լաւ է մի ակն պատուական՝ քան զբազում քարինս անպիտան»: Նմանաբնույթ դեպքերի թվարկումից Տաթևացին եզրակացնում է՝ «Նմանապէս և ազգս հայոց թէպէտ մի է, կարէ պատուական գոլ բազմաց»[2], որը բառացիորեն կրկնում է Ջահկեցին: Առհասարակ Ջահկեցու գրքում բազմաթիվ են «Գիրք հարցմանց»-ից նույնությամբ արտագրված, վերարտադրված, համառոտագրված կամ որոշ չափով վերաձևակերպված հատվածները: Այդ միտքը հաստատելու համար բերեմ տարբեր բովանդակությամբ ընդամենը երեք օրինակ:

1. «Գիրք հարցմանց»-ում նշելով հանճարի, իմաստության և գիտության միջև եղած հարաբերությունների մասին, Տաթևացին թվարկում է տասից ավելի տարբերություններ, այդ թվում հետևյալը. «**հանճարն է բնական, իմաստութիւն շնորհական: Իսկ գիտութիւն է ըստացական:... Դարձեալ՝ հանճարն է ի յարհեստն, իմաստութիւն ի բանն, իսկ գիտութիւն առ երկոքինն, այսինքն ի յարհեստն և ի բանն**»[3]: Ջահկեցին Տաթևացու բազում թվարկումներից վերարտադրում է հետևյալը. «**Հանճարն է բնական, իմաստութիւն է շնորհական, իսկ գիտութիւն է ստացական: Դարձեալ՝ հանճարն է ի յարհեստն, իմաստութիւն ի բանն և ի գործն, իսկ գիտութիւն առ երկոքինն, այսինքն ի արհեստն և ի բանն**»[4]:

2. «Գիրք հարցմանց»-ում Տաթևացին աստվածաբանությունը դասակարգում է չորս խմբի՝ տպավորական, պատճառաբանական, նշանական և խորհրդական, սահմանում յուրաքանչյուրի առարկան ու գործառույթները, և ըստ այդմ բարձրագույնը համարում խորհրդական (միստիկական) աստվածաբանությունը. «**Ա՛յս է ծայրագոյն գագաթն աստուածաբանութեան: Ա՛յս է երանութիւն իմանալեացն: Եւ ա՛յս է կարոտութիւն ամենայն ընտրելոց, այսինքն անհասին անհասապէս հասանիլ, և զանտեսն անտեսութեամբ տեսանել: Սա կոչի խորհրդական աստուածաբանութիւն: Նախ՝ զի խորհրդով և հաւատով տեսանի և ո՛չ քննութեամբ մտաց**»[5]: Ջահկեցին իր գրքում (էջ 63-65) բառացիորեն վերաշարադրում է Տաթևացու մտքերը, ի մասնավորի խորհրդական աստվածաբանության մասին գրում. «**Այս է ծայրագոյն գագաթն աստուածաբանութեան, որ է երանութիւն իմանալեացն և կարոտութիւն ամենայն ընտրելոց, այսինքն անհասին անհասապէս հասանել, և զանտեսն անտեսութեամբ տեսանել, զանչափն անչափութեամբ չափել, զանբովանդակելին անբովանդակելեաւ բովանդակել: Սա է խորհրդական աստուածաբանութիւն, որ խորհրդով և հաւատով, յուսով և սիրով տեսանի և ո՛չ քննութեամբ մտաց**»[6]:

---

[1] *Այվազյան Ա., Ղազար Ջահկեցու գաղափարախոսությունը, էջ 154:*

[2] *Գրիգոր Տաթևացի, նշվ. աշխ., էջ 551: Ի դեպ, այս արտահայտությունը հանդիպում ենք Պողոս Տարոնացու (†1123) «Թուղթ ընդդէմ Թէօփիստեայ» երկում: Եթե հույն վարդապետը ասում է, թե հույները բպվում (բպվմաթիվ) ենք, հայերը՝ սակավ (փոքրաթիվ), հետևաբար հույների դավանանքը ճշմարիտ է, իսկ հայոցը՝ թյուր, Տարոնացին հակաճառելով նկատում է, որ բպվությունը ինքնին առավելություն չէ, ավելին, բպվմաթիվ են այն իրերը, որոնց սակավը պատվական է բպվումից: Օրինակ, ոսկին սակավ է, հողը բպվում, մարգարիտը սակավ է, ավազը՝ անչափ և այլն: «Ահա տեսե՞ր զմինն պատուական քան զբպվումն, և ահա մինն հայք են: Որպէս վարշամակն փրկչին կատուցեալ յայլ կտաւոցն, և ի մի կողմն կացեալ, որ է օրինակ մերոյ ազգիս, կատուցեալ յամենայն ազգաց, կարգօք և կրօնիւք» (Պողոս Տարօնացի, Թուղթ ընդդէմ Թէօփիստեայ, Կ. Պոլիս, 1752, էջ 246):*

[3] *Նույն տեղում, էջ 270:*

[4] *Ղազար Ջահկեցի, Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, էջ 50:*

[5] *Գրիգոր Տաթևացի, նշվ. աշխ., էջ 123:*

[6] *Ղազար Ջահկեցի, Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, էջ 65:*

3. «Գիրք հարցմանց»-ում պատասխանելով հայոց եկեղեցուն մեղադրողներին, Տաթևացին գրում է. «**Դարձեալ, զօրինակ բազումք ընթանան ի մի ճանապարհ, և ամենեքեան թողեալ զնոյն՝ ընդ այլս գնասցեն, և մինն մնասցէ ի նոյնն. ո՛չ ասեմք թէ մինն բաժանեցաւ ի ճանապարհէն, այլ՝ այլքն: Այսպէս և ամենայն ազգք քրիստոնէից զնոյն ունէին ճանապարհ դաւանութեան և աւանդութեան յառաքելոց անտի մինչ ի ժողովն քաղկեդոնի. և յետ անտի բաժանեցան ամենայն ազգք յամենայն իրս, որպէս յա՛յտ է յիւրաքանչիւր եկեղեցիս: Իսկ մերս դաւանութիւն ամենիւ նոյնն եկաց մնաց զոր ունէր նախ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ և ի նմանեաց նորա**»[1]: Ղազար Ջահկեցին բառացիորեն կրկնում է այս միտքը. «**Եւ դարձեալ, զորօրինակ բազումք ընթանան ի մի ճանապարհ, և ամենքն թողեալ զնոյն՝ ընդ այլ ճանապարհս գնասցեն, և մինն մնասցէ ի նոյնն. ո՛չ ասեմք թէ մինն բաժանեցաւ ի ճանապարհէն, այլ՝ այլքն: Այսպէս և ամենայն ազգք քրիստոնէից զնոյն ունէին ճանապարհ դաւանութեան և աւանդութեան յառաքելոց անտի մինչ ի ժողովն քաղկեդոնի: Եւ յետ անտի բաժանեցան ամենայն ազգք յամենայն իրս, որպէս յա՛յտ է յիւրաքանչիւր եկեղեցիս: Իսկ մեք հայք ի նոյն դաւանութիւն կացեալ մնացաք ամենիւ զոր ընկալաք ի նախնւոյն մերմէ սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն և երից սուրբ ժողովոց**»[2]:

Այսպիսի ակնհայտ հարյուրավոր վերարտադրություններն ու փոխառությունները հիմք են տալիս պնդելու, որ Տաթևացու և Ջահկեցու հայոց ինքնության կառուցարկման «գաղափարախոսությունների» և ազգի բնութագրությունների միջև չկան նշմարելի տարբերություններ, հատկապես այդ ինքնության կրոնական ու աշխարհիկ տարրերի փոխհարաբերման առումով, որ ինքնությանը աղերսվող բոլոր հարցերում Ջահկեցին հետևում է Տաթևացուն, ուղղորդվում նրա գաղափարներով ու բնորոշումներով՝ բացառության այն դեպքերի, երբ Ջահկեցին գործադրում է իր վերամբարձ, զգայացունց ու չափազանցություններին միտված գրելաոճը և պերճախոսական հմտությունները: Տաթևացուց Ջահկեցին տարբերվում է ոչ թե քննարկված հարցերի ինքնատիպ կամ նոր լուծումներով, այլ դրանց եղանակավորումներով: Իսկապես, ի տարբերություն Տաթևացու ծանրակշիռ ու հավասարակշռված սքոլաստիկական ոճին, Ջահկեցին ավելի զգացմունքային ու չափազանցված է ներկայացնում իր վերաբերմունքը ինքնության նույնականացնող հիմքերի նկատմամբ: Ջահկեցին Տաթևացուց տարբերվում է նաև այն բանով, որ իր աշխատություններում ավելի մեծ տեղ է հատկացնում «հայկական թեմաներին» կամ ավելի մանրամասն է դիտարկում այնպիսի հարցեր, որոնք առնչվում են հայոց պատմությանը, մշակույթին, եկեղեցուն, եկեղեցիների (քրիստոնեական ազգերի) հարաբերություններին, հայ աստվածաբաններին ու մտածողներին, բոլոր նրանց, ովքեր նշանակալից ավանդ են դրել հայոց կյանքի որևէ բնագավառում: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Ջահկեցու «Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի» երկը իր բնույթով հավաքաբանական է, որոշ իմաստով՝ հանրամատչելի ուսումնական ձեռնարկ, որում համառոտ շարադրված են ինչպես կրոնաաստվածաբանական, այնպես էլ հայոց պատմությանն ու մշակույթին առնչվող հարցերի պատասխաններ: Այս իմաստով, ի համեմատ Տաթևացու, Ջահկեցին բանաքաղածո նյութերի օգտագործման շնորհիվ ընդլայնում է հայոց ինքնության քրիստոնեական հարացույցի շրջանակները, հարստացնում հավաքական հիշողության դաշտը, սակայն չի առաջադրում ազգային ինքնության ու ազգի նոր՝ **աշխարհիկ կամ քաղաքականացված** մեկնաբանություն. նրա ներկայացրածը առհասարակ ինքնության կրոնական հարացույցի տարրերի, մասնավորապես ազգի վերաբերյալ տաթևացիական մտքերի ընդհանրացումներն ու վերաձևակերպումներն են:

Сейран Закарян, ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ). В статье анализируется точка зрения, согласно которой глава Татевского университета, выдающийся богослов-философ Григор Татеваци (1346-1409) и Католикос всех

[1] *Գրիգոր Տաթևացի, նշվ. աշխ., էջ 551:*

[2] *Ղազար Ջահկեցի, Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, էջ 669:*

армян, теолог, поэт Газар А.Джахкеци (1737-1751) являются мыслителями и деятелями "националистического" толка, и что Джахкеци продолжает традиции «националистической идеологии» Татеваци, обогащая их «светскими» и «политизированными» идеями национализма. На основе анализа автор приходит к следующим выводам: а) и Татеваци, и Джахкеци являются средневековыми христианскими мыслителями, чьи теоретические взгляды не выходят за рамки религиозного мировосприятия и церковного учения. Неуместно считать их теоретиками "националистической идеологии", поскольку их идеология не преследует ни политические, ни идеологические, ни традиционные цели создания нации, не говоря уже об "агрессивных" целях, и не разрабатывает стратегические и тактические способы достижения таковых. Скорее она предназначена для сохранения вероисповедания, религиозных и культурных ценностей, мифов, традиций и ритуалов, характеризующих нацию. Эти религиозно-культурные элементы «национализма» (скорее патриотизма) вписываются в рамки религиозной парадигмы национальной идентичности, в центре которой находятся не нация и родина, а армянская церковь и армяне как религиозная община. б) Между «идеологиями» конструкции христианской парадигмы армянской идентичности Татеваци и Джахкеци нет существенной разницы, особенно с точки зрения взаимосвязи религиозных и светских элементов этой идентичности. Во всех вопросах относительно идентичности Джахкеци следует Татеваци и ориентируется его идеями и характеристиками. Следовательно, подход Джахкеци неуместно характеризовать как проявление «светской националистической идеологии».

Ключевые слова: *Григор Татеваци, Газар Джахкеци, национализм, националистическая идеология, средневековый менталитет, христианская парадигма армянской идентичности, религиозная символика.*

Seyran Zakaryan, THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI). In the article analyzing the point of view, according to which the head of Tatev University, prominent theologian-philosopher Grigor Tatevatsi (1346-1409), and Catholicos of All Armenians, theologian, poet Ghazar A. Jahketsi (1737-1751) are "nationalist" thinkers and figures, and that Jahketsi continues the traditions of Tatevatsi's "nationalistic ideology", enriching them with "secular" and "politicized" nationalistic ideas, the following conclusions are made: a) Tatevatsi and Jahketsi are medieval Christian thinkers, whose theoretical views do not transgress the scope of religious world-view and the church doctrine. They should not be considered as theorists of the "nationalistic ideology", because their ideology does not pursues neither political, ideological or nation-building, or even "aggressive" goals, nor it develops strategic and tactical ways to achieve them, but rather it is intended to preserve the faith, religious and cultural values, myths, traditions and rituals that are distinctive for the nation. These religious-cultural "nationalistic" (rather patriotic) elements fit into the religious paradigm of national identity in the center of which there are not the nation and the homeland, but the Armenian Church and Armenians as a religious community. b) There are no significant differences between the "ideologies" of Tatevatsi and Jahketsi concerning construction of the Christian paradigm of the Armenian Identity, especially in terms of interrelationship between religious and secular elements of Identity; in all questions relating to Identity Jahketsi is led by Tatevatsi, following his ideas and definitions, hence, it is not appropriate to describe Jahketsi's approach to the problem of Identity as a manifestation of "secular nationalistic ideology".

Key words*: Grigor Tatevatsi, Ghazar Jahketsi, nationalism, ideology, medieval mentality, Christian paradigm of Armenian Identity, religious symbols.*